

Փ Ո Ւ Ն Ձ

Ա.ՉԳ.Ա.ՅԻՆ

Մեր, և մանաւանդ Յունաց պատրիարքարանի ուշադրութեան արժանի է Գիրմաստընն սեպտ. 18 թուով գրուած հետեւեալ նամակը :

• • • Խմբագիր

Գիւղաքաղաքիս մէկ աղքատիկ ընտանիքէ ի հօրէ և ի մօրէ որք 28 տարեկան Տիրուհի անուն աչացառ ու վատարաղ օրիորդ մը, որ մարդասիրաց զթուօթեան ու առատածեռնութեան կարօտ իր փոքրիկ տնակին մէջ առանձնակի թշուառ կեանք կ'ուրէր, ասկէց 10 ամիս առաջ իր տան տանիքը նորոգել տուած ժամանակ ամասիրացի Մկրտանուն երիտասարդ հիւսան մը հետ կտեսնուի, որ հայրենիքը իր մանկամարդ ամուսինը ու նորափոթի զաւակը անագորոյն մահուան ճիրաններուն զոհ տուած բաղդաղուրկ շրջագայութեամբ ի Գիրմաստըն եկած էր. այդ ցաւակից թշուառները ջերմ սիրոյ կապակցութեամբ իրարու հետ շողկապեալ երկաքանչիւր կողման համահաճութեամբ ամուսնութեան լուծին տակ մանկու մշտնի համաձայնութիւն զոյացած, և մինչև ցփրջին շունչ իրարու օգնելու ուխտած, և իրենց այդ ուխտն ու որոշումն օրինօք հաստատելու համար Ս. եկեղեցւոյ խորհրդով պսակի օրհնութեան պատրաստուած էին. յայնժամ ազգին կողմանէ իր առաջին ամուսնոյն մեռած ըլլալը հաստատող, Ամասիրոյ առաջնորդին վաւերացմամբ վկայական մը պահանջուեցաւ երիտասարդէն. թէպէտ երիտասարդն բաւական ծախիք յԱմասիա երթեկութիւն ընելու տկար, օրիորդն ալ իր սիրելոյն հեռանալէն դժգոհ, ծախքը հատուցանելու պայմանաւ առաջարկեցին որ ազգը պաշտօնական հեռագիր քաշէ Ամասիա, սակայն անլսելի եղաւ իրենց առաջարկը. հոս տեղական կառավարութեան ալ դիմեցին, տեղւոյ Միւտր Սարիմ ֆէտիան քաղաքապետը քաղցր ընթացիք յորդորելու և պարտ ու պատշաճը տնօրինելու համար ազգիս կ'իւրկէ. հոսկ ուրեմն Պրուսա չուեցին, 5 ամիսէ ի վեր հոն նախ եղիլի վիճակնուն վրայ առաջնորդարանի գթութիւնը հայցելով գործերուն կատարուած խնդրեր են. արդարև Պրուսայի գերաշնորհ Առաջնորդին միջոցաւ Ամասիայէն պաշտօնական տեղեկութիւն պահանջուած, յորմէ արդիւնք սպասած ատեն, երիտասարդն ստակ շահելու դիտմամբ ժամանակ մը կհեռանայ իր սիրուհիէն և կերթայ ի Փաղար-դիւղ, բայց օրիորդն վերադառնալուն վրայ տարակուսանօք հանգիստ չըլլալով, իրրև զիւր պատիւը բռնաբարիչ կառավարութեան բողոքելով բերել կուտայ. այս երկու պանդուխտ սիրահարները բազմադիմի փորձերէ անցնելով, իրենց գործոյն յետաձգման պատճառաւ 5 ամիս տառապանօք սպասելու կհարկադրուին ի Պրուսա, և առաջնորդին բացակայութեան ժամանակ փոխանորդին կներկայանան, բայց կ'վստուին: Այսպիսի սիրոյ մրրկայոյց ովկիանոսի մէջ այէկոծ եալ ալ հայոց կողմէն յուսահատ երկուքին ալ ճարը հատած, իրենց եռանդուն նպատակին հասնելու յակամայից հարկադրեալ իրրև ի խաղաղ նաւահանգիստ յունաց կողմը կղիմեն: Սեպտ. 13ին երկուքսթի գիշեր, շաճը-փափազ ըստաճը և այլք այդ երկու եկամուտները եկեղեցւոյն մէջ շրով լեցուն զատ զատ տակառներու մէջ ներմուծեալ կրկնակրտութիւնը և կրկնադրոյժը կկատարեն, մէկին անունը՝ Եուվանի, իսկ միւսոյնը՝ Ելէնի կոչելով. պսակն ալ կատարելէ զկնի ձեռքերուն վկայական մ'ալ կուտան:

«Թէ յունացական ուղղափառ քրիստոնէութիւնը ընդունած են» որով սեպտ. 16ին զուարթ ու հանդարտ դարձան ի Գիրմաստըն:

Խմբագիր, կցաւիմ այս լուսաւորեալ դարուս մէջ յունաց կղերին կրօնամուլ ընթացքին ի Պրուսա: Այս առաջին անգամ չէ որ այսպիսի պարագայներու մէջ մեր եկեղեցին և խորհուրդները անարգելով մեր մկրտութիւնն ու դրոշմն ապօրէն ու անվաւեր կսեպեն:

* * *

Աղթամարայ ամեն կաթողիկոսն քանի մ'օրէն կմեկնի մայրաքաղաքէս, երթալ իւր աթոռը իւր ժողովրդեան քով ուսկից տասը տարիներէ հետ բաժնուած էր, և Պատրիարքարանի մէկ անկիւնը կը ճգնէր յորական երկայնմութեամբ:

Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանակերտ գացեր է: Շատ իրաւունք ունի այսպէս վարուելու: Անցեալները Պատրիարքարանը մինչև իսկ Բ. Դրան դիմեց, զանի Տիգրանակերտէն հանելու և Պոլիս բերել տալու համար. սակայն կէս ճանապարհէն ետ դարձուց և Չնքուշի ժողովրդեան հովուութիւնը յանձնեց: Եթէ արժանի էր ժողովրդական հովուութեան պաշտօնի, և եթէ անպարտ էր, ինչո՞ւ Տիգրանակերտէն հանելու ելաւ, և եթէ պարտաւոր էր ու անարժան՝ ինչո՞ւ դարձեալ հովուութեան պաշտօն յանձնեց:

Տիգրանեանի «հրաշագործ» մակդիրը կը տրուի. իրաւամբ արժանի է այս մակդիրին. միշտ կ'յաջողի այսպէս հրաշալի կերպիւ:

Կկարծէիք, թէ վերջին օրերս վանայ վիճակին մէջ խաղաղութիւնը վերահաստատուած է, և այլևս Պատրիարքարանը վանայ համար չպիտի գրադի: Սակայն, մեր այս կարծեաց հակառակ՝ լըսեցինք այս առաւօտ թէ վանէն Պատրիարքարան հեռագիր մ'եկեր է երէկ, որով գեր. Տ. Երեմիա եպիսկոպոսի վանայ առաջնորդական տեղապահութեան պաշտօնը չեն ընդունիր, և զՊոլոս վարդապետ իրենց առաջնորդ կարգել կպահանջեն եղեր:

Այսչափ հակիրճ տեղեկութեան վրայ աճապարանօք մեր կողմանէ դիտողութիւն աւելցունել խոհեմութիւն չհամարելով կսպասեմք մանրամասն տեղեկութեանց:

ՀՐԱԻԷՐ ԱՌ. Ա.ՉԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ, Հոկտ. 1, ի Ղալաթիա: Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ 6 ին և գոցուի 10 ին:

Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնտիները՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալով:

Նութիւնը կատարելու փութալով:
1876 Սեպտ. 27

Պատրիարք Կ. Պոլոս
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. - Վերաքննութիւն Սահմանադրութեան, - շարունակութիւն վիճարանութեան յօդուածոյ թաղային մատակարարութեան:

Ատենադպիր
Գ. Յ. Մեկէ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւելեան խնդրոյն վրայ՝ Երուսաղիմի ալ և այլ կողմերէն եկած իրարու հակառակ լրոց, հեռագրոց ու դիտողութեանց բաւական երկար շարք մը դրինք մեր նախորդ տեսութեան աւթիւ, և ցուցինք թէ ո՞րչափ դժուարին է որոշ ու բացայայտ եզրակացութիւն մը արտագրել անոնցմէ:

Նոյն օրէն հետէ, դարձեալ նմանօրինակ լուրերով զբաղեալ կտեսնուի աշխարհ, բայց պէտք է գիտնալ, թէ մըթութեան քողն բաւական փարատիլ սկսած է: Կըսուէր, թէ Երուսաղիմի կառավարութիւնը համաձայնած են՝ 31 աւուր նոր զինադադար մը առաջարկել պատերազմող կողմանց. ահաւասիկ այս զրոյցը կստուգուի. շարժ զորք մայրաքաղաքիս անգղիական դեսպանը օգոստոսի առաջինին ներկայանալով երկու ժամու չափ բանակցելու պատիւ ունեցեր, և այս առթիւ Նորին վեհափառութեան մատուցեր է զինադադարի յիշեալ խնդիրը. մի և նոյնը ռուսական գործակատարն ալ ուղղակի առաջարկեր է Բ. Դրան: Այս առաջարկութիւնը միւս կողման, այսինքն Սերվիոյ ալ արդէն հաղորդուած ըլլալով, Պէլկրատի մէջ խորհրդակցութեան նիւթ եղած է:

Գլխաւոր պաշտօնեայն զինադադարը կընդունի, իսկ Միւրան և պատերազմի կուսակցութիւնը կմերժէ եղեր, որոյ համար հրաժարեր է գլխաւոր պաշտօնեայն, բայց չէ ընդունուեր: Ինչ և իցէ, Սերվիա ալ հարկաւ պիտի ստիպուի ընդունիլ տէրութեանց առաջարկութիւնը, խորհրդածելով թէ իտալական ու անգղիական և այլ կառավարութեանց հիւպատոսներուն կողմանէ եղած խիստ դիտողութիւններն, և Սերվիոյ օգնելէ ձեռքնափ ըլլալու սպառնալիքներն, երկրին համար չեն կրնար օգտակար ըլլալ: Սերվիոյ գլխաւոր նպաստամատոյցն եղող նոյն իսկ Ռուսիոյ կառավարութիւնն ալ նոյն խորհուրդը կուտայ իշխանին և իւր պաշտօնէից. և կհաւաստէ զայս՝ եթէ ստոյգ է որ Պէլկրատի ռուս հիւպատոսը Բեդրսպուրկ պիտի կանչուի, զինադադարը չընդունելու խրատ տուած ըլլալուն պատճառաւ:

Գարատաղի իշխանութիւնն արդէն յայտարարեր է, թէ կընդունի զինադադար և հաշտութիւն, բայց պայմանաւ, որ հողային շնորհ մ'ըլլայ իրեն: Կկարծուի, թէ Բակուզայի անդղիական հիւպատոսին անձամբ Չէթինճէ երթալն այս արդիւնքը արտադրած է:

* * *

Զինադադարի խնդրէն յետոյ, գետապանաժողովոյ մը գումարման խնդիրը կ'յուզուի: Գերմանիա՝ որոյ համար կըսուի թէ չեզոքութիւն կ'պահէ ներկայ խնդրոց մէջ, և որոյ ինչ գոյն ունենալը յայտնուած չէ, Գերմանիա՝ կըսեն, կ'փափաքի և կ'առաջարկէ, որ գետապանաժողով մը կազմուի արևելեան խնդրոց կարգադրութեան համար: Այս առաջարկութիւնը՝ որոյ հեղինակութիւնը ի սկզբան Ռուսիոյ կ'վերագրուէր, կընդունի Ռուսիա, բայց պայմանաւ որ չեզոք երկրի մը մէջ ըլլայ, և տէրութեանց արտաքին գործոց նախարարներէն բաղկանայ: Այս մասին, Գաղղիոյ, Իտալիոյ և Անգղիոյ կարծեաց ինչ ըլլալը դեռ նշանակուած չէ: Միւս կողմանէ կ'հրատարակուի, թէ տէրութիւնք իրենց կողմանէ փոխանորդ կարգած են Անգղիոյ կառավարութիւնը, հաշտութեան պայմանաց վրայ բանակցելու և կարգադրելու համար:

* * *

Զեմը կրնար, այս քանի մը տողերով կնքել լրագրոյս այս մասը, բոլորովին ընդ մոռացութեամբ թաղելով այն խնդիրը, այսինքն զինու զորութեամբ միջամտելու առաջարկը՝ զոր Ռուսիա ի վեր հանեց, և որոյ վրայ տակաւին կ'սուսուի ամենայն ջերմութեամբ:

Աւստրիոյ, Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ բանակցութիւնք կ'չարունակեն այս մասին: Աւստրիոյ կայսրը Գերմանիոյ կայսեր հաղորդեր է՝ առ Ռուսիոյ կայսրն ուղղած պատասխանին պատճէնը, և Գերմանիոյ կայսրը Մանթէօֆէլ զօրավարն զրկեր է վիէննա, Արեւմտեան ծրարն իսկոս կայսրերը համաձայնեցնելու, և խորհուրդ տալու համար, որ Ռուսիոյ առաջարկութիւնը ընդունի, այսինքն՝ նորա հետ զօրք թափեն Պօմնա, Հէրսէք և Պուլլարիա, մինչև որ առաջարկեալ բարեկարգութիւնք կամ ինքնօրինութիւնք տրուին թուրքիոյ կողմանէ, և ապահովութիւն գոյանայ: Կըսեն թէ աւստրիական ու ռուսական նաւատորմի զիններն ալ Կ. Պօլիս խաղացուներ առաջարկուած է, բայց Լոնտոնէն կ'գրեն, թէ այս նաւային դերն ալ Անգղիոյ ու Գաղղիոյ կ'թողուի:

Այս ամենէն թերևս կարելի ըլլայ հետևելու, թէ Ռուսիոյ ու Գերմանիոյ մէջ այս մասին համաձայնութիւն կայ. սակայն Աւստրիոյ համար նոյնը չըսուիր. Աւստրիա վարանման մէջ կ'տեսնուի, և վախնալով թէ մի՛ գուցէ ծուղակն իյնայ ու վնասուի, կուզէ որ զինու զօրութեամբ միջամտութեան խնդիրն ալ գետապանաժողովով մը որոշուի, և ապագային համար ապահովութիւն տրուի:

Իսկ վերջին լուրերուն նայելով՝ Աւստրիա բաց է բաց մերժեր է զինու զօրութեամբ միջամտելու առաջարկութիւնը, թէև Ռուսիոյ կողմանէ երկրորդ անգամ առաջարկուեր, և ընդունելութեան համար պնդուեր է:

Այս դարձուածներն ու պարագաներն են, որ լսողին շփոթութիւն կ'պատճառեն, և ոմանք նկատողութեան առնելով նաև Ռուսիոյ կառավարութեան զինուորական պատրաստութեանց համար ցուցած փութակները, պատերազմին ընդարձակուիլն՝ անհրաժեշտ, և բանակցութեամբ ներկայ խնդրոց վախճան տրուիլն՝ անհնար կ'համարին:

Միւս կողմանէ ընդհակառակն կարծիք կայ, թէ Ռուսիա չկրնար բաժնուիլ Եւրոպայէն, չկրնար առանձինն պատերազմի ելնել. վասն զի, կըսեն, ո՛չ զինուորական, ո՛չ գանձային և ո՛չ երկրին ցիրուցան ու ընդարձակ վիճակը չեն ներք. և եթէ՛ Վլադիմիր, Ռուսիոյ կառավարութիւնը ժողովրդեան կողմանէ պատերազմի համար ցուցուած եռանդէն և յայտարարութենէն հարկադրեալ կամ քաջալերեալ՝ պատերազմի ելնէ, մեծապէս կ'վնասի: Ռուսիոյ վրայ հրատարակեալ այս տեսակ տեսութիւններն չէ՛ թէ օրինակելու, այլ եթէ միայն համառօտեւրու ելնենք, ստուար էջերու կ'կարօտիմք:

Արդ՝ այս անգամ ալ Իւրոպայի ընթացից վրայ այս քաղուածն ընելէն յետոյ, կ'մնայ Բ. Գրան որոշմանց վրայ ծանօթութիւն հրատարակել, որչափ կարելի է: Եւ ահա առիկ, նոյնը կ'գտնուի լրագրոյս յաջորդ գլխոյն սկիզբը, և որ բաւական պարզ ու բացայայտ է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ընդ նախագահութեամբ մեծ էպարքոսին, Բ. Գրան արտաքոյ կարգի ընդհանուր ժողով մը գումարեցաւ. 120 հոգի ներկայ էին, անսպաշտօն և պաշտօնաւոր նախարարք, զինուորական ու կրօնական մեծամեծք և Շուրայի-Տէվլէթի անգամք:

Այս ժողովն, յետ բազում խորհրդակցութեան, որոշեր է ընդունիլ վեց ամսուան համար զինադադար, և տեղեկագիրն ստորագրուեր է: Այս միջոցին մէջ եթէ միւս կողմանէ սոյն որոշման հակառակ շարժում մը տեղի ունենալով օսմանեան կառավարութեան վնաս մը ըլլայ՝ եւրոպական տէրութիւնք փոխարինել խոստացեր են: Այսպիսի երկար ժամանակի մը մէջ, թէ՛ կառավարութիւնք խորհրդակցելու, և թէ՛ Բ. Գրան իւր ընելիք բարեկարգութեանց ձեռնարկելու պատեհութիւն կ'ունենայ:

Վեց ամսուան զինադադարն ընդունուեր է հետևեալ պայմաններով:

- 1. - Այս միջոցին, Սերվիոյ համար և ո՛չ մէկ կողմանէ օգնութիւն չգայ:
- 2. - Սերվիոցիք իրենց նախորդ վիճակին մէջ և գտնուած տեղերին մնան:
- 3. - Եթէ այս որոշման հակառակ վարուին և վնասեն օսմանեանց, եւրոպական կառավարութիւնք փոխարինեն:
- 4. - Այս պայմաններն պիտի ստորագրուին Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ և Աւստրիոյ կողմանէ:

Ժողովը ցրուելէն յետոյ, որոշումը հաղորդուեր է գետապանոց առաջին թարգմաններուն:

Եւրոպա գտնուող հրէական ընկերութեան մը կողմանէ մէկը մայրաքաղաքս պիտի ղրկուի եղեր, Սերվիոյ կուսակա-

լութեան վիճակը ծախու առնելու, և խորայելեան թագաւորութիւնն անդաւոր վերահաստատելու համար: Հրէայք անցեալ ժամանակաց մէջ կ'թաղաւորէին յիշեալ երկրին վրայ: Աւելորդ է ըսել, թէ այդ կուսակալութեան վիճակին մէջ կ'գտնուի Ս. Երուսաղէմ, Շամ և այլն:

Պասիրէթ Տաճիկ լրագրոյն հաղորդուած ըլլալով այս լուրը՝ հետևեալ գիտողութիւնն ըրած է:

« Ըստ առածին, թէ հրէայն երբ աղաքատանայ՝ հին տոմարները կ'քրքրէ, « - կերևայ թէ հրէայք թագաւորութեան վերահաստատութեան համար « ինքզինքնին անկարող տեսնելով և յուսահատելով, Սերվիոյ մէջ թագաւորելու « բոլորովին անկարելի եղող - հին տոմար « քրքրելու - ապարդիւն երևակայու « թեան մէջ ինկեր են: Աստուած խելք « տայ »:

Հրէայք արդարև չեն կրնար յաջողցունել այս առուստուրն. բայց պէտք է խոստովանիլ, որ հրէայք նիւթական ու իմացական ճիւղութեամբ ու միութեամբ այսօր բոլոր աշխարհի մէջ երևելի հանդիսացած են, և կրնան դիւրացունել շատ գոյուարին բաներ:

— Շուրայի-Տէվլէթի նախորդ նախագահ Երուսաղէմ Գրանի վաշա՛ որ ժամանակէ մը հետէ հիւանդ էր՝ երկուշաբթի գիշեր մեռաւ: Երէկ առաւօտ մեծ Եպարքոսն, Միտհաթ փաշա և այլ բարձրաստիճան պաշտօնատարք ապարանքը գացին և յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուեցան: Յատուկ շոգենաւով իւսկիւտար փոխադրուեցաւ մարմինը, և Նուհ-գուլուսը ըսուած տեղը իւր կառուցանել տուած հիւանդանոցին քով յատկապէս պատրաստուած շիրմին մէջ ամփոփուեցաւ:

— Նոր կազմուելիք ընդհանուր ժողովոյն համար խմբագրեալ ծրագիրն քննելու պաշտօնով յանձնաժողով մը կազմուեր է, որոյ անգամք են Սերվիոյ փաշա, Ֆէթվա-Լ. մինի խալիլ էֆէնտի, Ահմետ խուլուսի էֆէնտի, Պօլսոյ քաղաքապետ Գատրի պէյ և այլք:

— Այտընի նախորդ կուսակալ խուրչիտ փաշա՛ թղթագրամի գործողութեանց վերատեսչութեան համար կարգեալ մասնաժողովոյն նախագահ անուանուեր է:

— Օտէսայի կողմերէն եկող ճամբորդներէ իմացեր է Պասիրէթ, թէ ռուսական թղթատարով նոյն կողմերը ցրուած գրերէ և ուրիշ բաներէ կրկնապատիկ վարձք չառնուած՝ չտրուիր տէրերուն, և այս կողմանէ գոյացած արդիւնքը Սերվիոյ օգնութեան կ'ըրկուի:

— Հիճազի կուսակալութեան վիճակէն հանգանակեալ 8390 լիրայի գումար մը՝ երէկ Բ. Գրան յանձնուեր է:

— Ռուսիոյ կառավարութիւնը հրամայեր է, որ իրենց հայրենիքը գտնուող զօրքն ու հրամանատարք տեղերնին դառնալու պատրաստուին:

— Սերվիոյ Միլան իշխանին նորածին որդւոյն կնքահայրութիւնը՝ Ռուսիոյ կայսեր կողմանէ փոխանորդաբար պիտի ընէ Գարսօֆ զօրավարն:

— Զրոյց կայ, թէ հրաման եղեր է որ մայրաքաղաքիս ռուսական դեսպա-

նատան և Բանկայթիի ռուսական հիւանդանոցին կազ կարասին ժողովուրի, և թէ՛ պատերազմի նշաններ են առնք. սակայն՝ ըստ մեզ, ստուգութեան կարօտ է այս զրոյցը :

— Անցեալ ուրբաթ օր վարնայի ճանապարհաւ Աւստրիայէն երկու զինուորական հրամանատարք և 8 բժիշկք մայրաքաղաքս եկեր են : Բժիշկները կայսերական կառավարութեան կողմանէ ուղուեր են . իսկ զինուորականք ինքնակամ թողով իրենց զինուորական աստիճանը և հրաժարելով, ելեր են ծառայել օսմանեանց, և եթէ պատերազմն ընդարձակի՝ Աւստրիայէն ու Հունգարիայէն շատ կամաւոր պիտի գան և օսմանեան զօրաց հետ միանան եղեր :

— Կըսուի, թէ Սէլանիկէն պատերազմի գացող կամաւորք իրենց տեղերը պիտի դաճան :

— Ռուսիոյ զինուորական գործոց նախարարն՝ Սե ծովու ամրութիւնները աչքէ անցունելու ելեր է :

— Ֆար-տիւ-Պոսֆոր խափանեալ լրագրոյն՝ վերստին հրատարակութեան հրաման տրուեր է :

— Թունուսի զինուորական պաշտօնեայն այս անգամ օգոստոսիառ Սուլթանին գահակալութիւնը շնորհաւորելու համար մայրաքաղաքս բերող շոգենաւն՝ ճամբան անդրիական շոգենաւու մը զարնուած, և զանի ընկղմած ըլլալով, յիշեալ շոգենաւուն ընկերութեան կողմանէ այժմ 67 հազար 640 լիրա կպահանջուի Թունուսի իշխանութենէն, 30 հազարը շոգենաւուն արժէք, 24 հազար 640ը՝ բեռանցն, և 13 հազարը՝ մէջը գտնուած պատրաստ դրամին և կարասեացը փոխարէն :

— Մեծ Եպարքոսն քանի մ'օրէ հետէ անձնական տկարութիւն ունենալուն պատճառաւ, օգոստոսիառ Սուլթանը երկուշաբթի առաջին սենեկապետը զըրկեր է ի տես, և Նորին բարձրութիւնն նոյն օրը կայսերական պալատը գացեր, հոն ընթերթ, և երկու ժամու չափ բանակցեր է Նորին վեհափառութեան հետ :

— Եւրոպական Տաճկաստանի մէջ խուճկութիւնը երկ ելէն ի վեր, յաճախ չեզոքութեան և խաղաղասիրութեան յայտարարութիւններ ընող Յունաստանի մէջ ալ այս օրերս ժողովրդական գումարումներ կըլլան : Շարաթ օրը, ըստ Լա-Թիւրքիի, երկրորդ անգամ գումարուեր են բազում ժողովուրդ, և յետ ատենախօսութեանց որոշեր են խնդրել կառավարութենէն, որ զօրքը սպառազինուրի և կազմ ու պատրաստ ըլլայ : Ինչո՞ւ, կըսեն եղեր, միայն Պոսնիոյ, Հէրսէքի և Պուլղարիոյ համար ինքնօրինութիւն տալ կառավարիկն եւրոպական տէրութիւնքնոցա ապստամբութեան գրօշ պարզելով արիւն թափելուն համար, նոցա զրկեալ ու տառապեալ ըլլալուն համար միթէ, կ'յարեն հելլենացիք, Տաճկաստանի մէջ գտնուող մեր եղբարք ըստ ամենայնի անգորր ու բարեկեցիկ են, միթէ նօքա ալ երբեմն գունդագունդ արիւն թափած չեն, և միթէ նոցա այժմեան հանդարտութիւնը իրենց իրաւունքէն կկապտէ՞ զիրենք :

Աւասիկ, ժողովրդեան վիճակն այժմ Յունաստանի մէջ, տեսնենք, կա-

ռավարութիւնն ինչ կընէ թագաւորին դարձած և խորհրդարանին բացուած ժամանակ, որ մերձ է :

— Ռուսիոյ կայսեր թիկնապահ Սոմարազօֆ զօրավարն՝ առ կայսրն Աւստրիոյ նամակ տանողն՝ Միլան իշխանին հետ տեսնուելու դացեր է անպաշտօնական կերպիւ :

— Գարատաղի իշխանն ու խորհրդականք կարտմտին եղեր՝ Միլան իշխանին արքայական տիրոջ տրուելուն համար, դիտողութիւն ընելով թէ կանխաւ այս մասին իրենց հաւանութիւնն առնուած չէ : Բայց անհաւատալի կթուրի մեզ այս լուրը . որովհետև կ'իշխմք թէ պատերազմէն յառաջ այս երկու իշխանութեանց մէջ հաստատեալ դաշնագրով մը ընդունուած էր Միլանի թագաւոր հըրատարակուելուն խնդիրը :

— Անուանի Լորտ Բըսըլ՝ որ վերջին ժամանակներն Թուրքիոյ կառավարութեան գէմըրած հրատարակութիւններովը Թուրքիոյ բարեկամ չէր համարուեր, այս օրերս յայտարարեր է թէ՛ Թուրքիոյ բարեկարգութեան, և ո՛չ թէ Ռուսիոյ ի Պոլիս տիրապետութեան կփափաքի :

— Անցեալ շաբթու փարիզի ռուսական դեսպանատան մէջ խնճօք մը տրուեր, և ռուսական դեսպանը խաղաղութեան նպատակաւ յայտարարութիւններ ըրեր է :

— Պարսից Շահին կողմանէ առ Օգոստոսիառ Սուլթանն շնորհաւորութեան հեռագիր մ'ուղղուած ըլլալով, Նորին վեհափառութիւնն ալ իւր շնորհակալութիւնն հեռագրեր, և միանգամայն յոյս յայտներ է թէ իւր օրով երկու տէրութեանց մէջ բարեկամութիւնն ու սէրը առաւել հաստատուն ու անկեղծ պիտի ըլլայ, ինչպէս վայել է երկու Միւսլիման ազգաց :

— Եգիպտոսի Խտիվին ատենադպիր թալաթ փաշա՝ Նորին բարձրութեան շնորհաւորական ուղերձը կիւրակէ օրը Օգոստոսիառ Սուլթանին մօտոյց :

— Առաջին աստիճանի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ՝ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարին :

— Երկու պուլղարք, Պուլղարիոյ կողմանէ նախորդ ամսոյ 20 ին Անգղիոյ արտաքին գործոց նախարարին ներկայանալով՝ յայտագիր մը տուեր են՝ թագուհւոյն մատուցանելու համար : Նախարարն ըսեր է, թէ Անգղիա ամենայն ուշագրութիւն պիտի ընէ Պուլղարիոյ համար, և իւր կարողութեան չափ պիտի աշխատի՝ ապագային համար ապահովութիւն ստանալ : Յիշեալ երկու անձինք՝ Լոնտոնի գերմանական և այլ տէրութեանց ներկայացուցչաց ալ մատուցեր են յայտագրէն մէկ մէկ օրինակ :

— Պաղտատի կուսակալութենէն մինչև ցարդ մասն առ մասն եկած հանգանակութեան գումարն 37750 լիրայի հասած է, որոյ չափ և ո՛չ մէկ տեղէ եկած չէ :

— Բուլմանիոյ իշխանը հրամայեր է՝ ամեն կարգի զօրքն կրթութեան տակ առնուլ, և փորձահանդէսներ ընել :

— Բուլմանիայէն առնուած մասնաւոր հեռագրի մը նայելով՝ կըսէ վազբթ,

երկաթուղւոյն տնօրինութեան հետ պայմանագրեր է Ռուսիոյ կառավարութիւնը՝ սահմանագլուխը գտնուած 160 հազար զօրք օրը 3 ական հազար փոխադրելու համար, որով կմակարեւորի թէ այդ զօրքը Սերվիոյ օգնութեան համար պատրաստուած է :

— Կըսուի, թէ Բ. Գուռը դիտողութիւն ըրեր է Բուլմանիոյ իշխանութեան, ռուսական բազմաթիւ զօրաց Բուլմանիոյ ճանապարհաւ Սերվիա անցնելուն համար :

— Թունուսի մէջ հանգանակեալ 35 հազար լիրայի գումար մը այս օրերս մայրաքաղաքս հասած և հանգանակութեան մասնաժողովին յանձնուած է :

— Պրազիլիոյ կայսրն ու կայսրուհին Պրուսա գացին կիւրակէ օրը :

— Պատերազմական լուրերն վերջին օրերս դարձեալ սկսան յաճախել երկու պատերազմող կողմանց աղբիւրներէն ալ : Սերվիայէն ելած լուրերն ընդհանրապէս սերվաց նպատակաւ կտեսնուին, իսկ օսմանեան աղբիւրներէն առնուած լուրերն, և մանաւանդ տաճիկ թերթերն ընդհակառակն կ'ըրեն, թէ՛ Սերվիոյ և թէ՛ Գարատաղի կողմերն եղած պատերազմաց համար : Այսու ամենայնիւ օտար երկիրներէ, մանաւանդ փարիզէն ու Լոնտոնէն առնուած տեղեկութիւնք և լրագրական թղթակցութիւնք սերվիական լուրերուն չափազանցութիւնը կհաստատեն, և յաղթութիւնը վերջապէս օսմանեան զօրաց կընծայեն, մանրապատումն կարագրութիւններ ընելով :

Ներկայ տարւոյս մարտ ամսոյն սկիզբէն մինչև յուլիսի վերջը, մայրաքաղաքիս և արուարձանաց մէջ սովորական հիւանդութեամբ մեռնողներուն թիւն՝ 4792 է, որոց 1740ը՝ քրիստոնեայ, 277ը՝ հրէայ, և մնացեալք մահմետական են :

— Ներկայ սեպտ. ամսոյ մէջ (1) Սուէ-իշի ջրանցքէն 109 շոգենաւ ու նաւ անցեր են, և 2 միլիոն 239 հազար ֆրանգ հասոյթ գոյացեր է :

— Գատը գիւղ և կղզիներն այս օրերս տղայոց վրայ կոկորդի հիւանդութիւնը յաճախ կտեսնուի, և Գատը գիւղի ֆրէրներուն վարժարանին մէջ այս հիւանդութիւնը ճարակելուն պատճառաւ, ժամանակի մը համար արձակուրդ եղեր է :

— Հռչակաւոր Բօշֆօրի լրագիրն՝ Գաղղիոյ գահակորոյս կայսրուհւոյն ծընունդն իբրև ապօրինաւոր հրատարակած ըլլալով, դատ բացուեր է կայսրուհւոյն կողմանէ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Սեպտեմբեր 28

Քօնստիտէ	15-50
Սօսիէթէ Ժէնէրալի բաժինք Անգ. լիր.	2-10
Քրէտի » » Օսմ. »	2-25
Երկաթուղեաց » » ֆր.	58-20
Թրամուէյ Օսմ. լիր.	1-
1863ի փոխառութիւն ֆր.	76-
1863ի » »	77
1869ի » »	67
1872ի » »	25-

ԴՐԱՄԲ, Օսմ. լիրան 100 էն

Մէճիտիյէ	102-26	Բուսիոյ բոլ	88-20
Մէթալիք	108-20	Գաղղ. լիր	87-10
Պղինձ	140-	Անգլ. »	110-12
Թղթաղբամ	114-50	Գրիմից	51-10

Ի Լ Ա Ն
ՊԱՊԸ ՍԵՐԱՍԲԵՐԻ

Աստվածի շահանք էրդաք անպարենա պիր միլիոն գըլէտէն պիր պուշուք միլիոն գըլէյէ գատար լիւզուլի օլուպ մինագատայա գօնուլան իքինճի ճէնօվա փիրինճինին էսմանը թէպիմինի միւպէյոյին վիրիէճէք օլան մագպուզ սէնէտուլէրի թարիլէրինտէն իթիպարէն օթուզ պիրէր կիւնիւ իքիշէր թագսիտ իլէ մէթալիք եանի գայիմէ օլարագ նիզամիյէ խազինէսինտէն վիրիլմէք շուրութը իլէ պէհէր գըլէսի իւզ զրուշ օթուզ փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ իւլուլը բումինին օթուզընճը փէնճէնպիհ կիւնիւ գարարր գաթիսի վիրիլէճէկինտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէգըլուրտէ Տարը Շուրայի սաքէրիյէ կէլմէլէրի :

1876 իլուլ 26

Պապը Սերասբերի

ՄԱՆՐ ՎԷՊԵՐ

ՈՒ

ՊԱՍԵՐ

ՄԱՆՐ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

Մ. Մամուրեան

Տպարանին Տէրէեան

Այս գրքայիւր յատկապէս ծաղկոցի մանրը տղոց համար յօրինուած է և քանի մը առաւելութիւններ ունի, որ մինչև ցայսօր ուրիշ ընթերցարաններու մէջ տեսնուած չեն : Նախ փոքր տղոց մտքին յարմար է, թէ նիւթերուն ընտրութեամբ և թէ ոճին պարզութեամբ : Երկրորդ՝ ամեն մէկ վէպին յարմար պատկեր մը կը պարունակէ, որ մանաւանդ տղոց ընթերցասիրական հետաքրքրութիւնը շարժելու մեծ հրապոյր մ'է : Այս պատկերներէն 80էն աւելի կան : Երրորդ՝ պարունակած վէպերն ու դասերը տղոց սիրտն ու միտքը բանալու և կրթելու կ'օգնեն, և ինչպէս որ յառաջաբանին մէջ գրուած է՝ « ընտիր բարոյական խորատներ կ'աւանդեն, և նպատակ ունին մանկտին բարեսրտութեան, գործունէութեան և պարկեշտութեան յորդորելու » :

Միով բանիւ՝ այս գրքայիւր մեծ պիտոյք մը կը լինէ և կ'արժէ որ ամեն փոքր տղոց և ամեն մայր մէյմէկ հատ իրենց ձեռքն ունենան : Տարակոյս չունիմք որ ազգային դաստուներն դպրոցաց մէջ պիտի ընդունին այսպիսի օգտակար գործ մը :

Կը ծախուի Մ. Ղ. Եազմաճեան գրատունը Եէնի-ճամի Զիլինկիրէր ճատտէսի թիւ 8. գին 1 Ֆրանք 50 օանդիմ :

ԲԱՐԻՉՆ ՅԱՄԵՐԻԿԱՅ

Գործ. Է. Լապուլէյ

Այս եզակի գործին երկրորդ և վերջին հատորն ալ իլմիրի Տէտէեան տպարանէն հասած ըլլալով, կը գտնուի Եէնի-ճամի փողոց, չիլինկիրէր ճատտէսի, թիւ 8, Մ. Ղ. և Եազմաճեան գրատունը : Գին 2 Ֆրանք :

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՅ

ԳԵՆԵՐՈՒԵԱՅ ՎԱՐՄԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանիս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է :

Այն ծնողաց կամ որբերու խնամակալ մար-

դասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որբը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՛ :

Ս. Ղեւոնդեանց դիւերօթեայ վարժարանս յառաջագէժ վարժարաններու մեթոտով կ'անուանորեալ խիտ բարեկարգ վարժարան մ'է :

Կ. Պօլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէ և ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և զրօսալից վայրերէ հեռի անփոփ և անզբաղ մտօք միայն ուսման պարագելու կողմանէ :

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք միայն, հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վերի վերոյ կամ թերի :

Ամեն ուսանելի առարկայից համար, ընտիր և յաջողակ դասատուներ կան :

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խընամով պահպանելու համար վարժարանս իւր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կ'պահէ վիպեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան :

Աշակերտին տարեկան թոշակն է 52 լիւր օսմանեան որոյ մէջ են, երթևեկութեանց թըղթատարութեանց և սովորական ագանելեաց ծախքէն զատ, ուրիշ բոլոր ծախքերը :

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի :

Միշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս. որ ատեն որ ուզեն՝ աղատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սաները տալու :

Որոնք որ աշակերտ պիտի դրկեն մեզ՝ պէտք է կամ Պօլսի ֆուշլ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձում էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա-Համամ Խանը Խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին :

1876 սեպտ. 1

Ի վանս 2. Ս. Աստուածածնի յԱրմաշ Խարէն Եպիսկ. Վ. Արմաշու.

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ



ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵՒ ԴԵՂՈՐԷԻՑ

Վ. Ծ Ա Ն Ն Ի

Բերա Մեծ փողոց Աղաճամի թիւ 77

ԵՒ

Կ. Պօլիս կամուրջի հրապարակք թիւ 1-2

Երոպոյի առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կ'ապուած, և իւր զեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հըւշակուած :

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Յուշէ Լալիէն, որ փոքրիկ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ աննորարար ուտելիքն է համայն Երոպոյի մէջ ընդունուած և ամեն զըւ-

խաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած : Հոն կը գտնուի նաև .

Գոմօ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Երոպոյի մէջ և շատ կը փնտրուուի :

Սէլ-Ֆալի որ Քիլի, գուտ և մաքուր, Բէլթի, Տիւպօք, Ժօպսթ և Լիվանս Լէղէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած :

Ձկան Խալ, գուտ, Գրիսթիանայի Բէթեր Մէլլէրի գործարանէն ելած :

Ելերէ (հինտիպա) Խաճաճ, Լուսովիկա պուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և խորժակ բացող, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու :

Արուստայան սառոյց ամեն ժամու մէջ : Տիւքիէ Զօր, մաղերու անվիրակելի ներկ :

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՆՍԻ ՀՈՒՈՒԻԵԻ

Լեարգի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիտ ընտիր է սոյն դեղահատը, նաև իղային տկարութեան, ուժաթափութեան և տիրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը : Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և զբոսելով կենսական գործարանները կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը շափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական զիրքը կը գտնուի :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒՈՒԻԵԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պայտսմական յատկութեանցը չհաւասարիք բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և տեսանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կ'աւանան. օգտակար է նաև հարսուխի, հազի, սրտի բարտխման, մանաւանդ օղաջու (եէլ) ըսուած հիւանդութեան : Իւր կազութիւնը և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (սըրանա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ՝ կը զիմագրաւէ : Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղափառաներու քով, և մասնաւորապէս Պահճէ-գափու թաշ խանի կողմեր Պ. Գասպեանի դեղարանը՝ Նօ. 7 կը ծախուի : Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլուէի Ի Լոնտոն Օքըսֆորտ փողոց թիւ 535 :

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

- 1.—Փունջը 2ՈՐԻՔՏԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :
- 2.—Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար :
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :
- 4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
- 5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն շայ գրաւիճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով :
- 6.—Մանուցման տողը 3 զրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պօլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19 :

ՏԵՐԵՆ ԵՒ ՏԵՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳԻՐ Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիգա փաղա խան թիւ 3